ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
"Health Project Implementation Unit" State Agency, Ministry of Health

[174878]-14 2014-04-04

Հարգելի գործընկեր

«ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ ՇՀԱՊՁԲ-11/3-14/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3»*** շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ: Ապրանքների ձեռքբերման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:

Սույն գնման գործընթացն իրականացվելու է էլեկտրոնային ձևով՝ ***www.armeps.am*** *էլեկտրոնային կայքի միջոցով:*

Հայտերը կարող եք ներկայացնել մինչև սույն թվականի ***ապրիլի 16-ը*** *ժամը «**17:00**»:*

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված «7-րդ» աշխատանքային օրը ժամը «17:00»-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **«ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ ՇՀԱՊՁԲ-11/3-14/2»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» ՊՀ
Գայանե Գաբրիելյան
Հեռ. (010) 29 75 36

Հավելված 5
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N «ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

«ՀՀ ԱՆ ԱԾԻԳ» ՊՀ-ի կողմից N ***«ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/»*** ծածկագրով հայտարարված ընթացակարգի .....չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

3) _____**-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝**
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____**:**
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

4) _____**-ի հասցեն և հեռախոսի համարն է՝**
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____**:**
Մասնակցի հասցե, հեռախոսի համար

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 201 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N «ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ***«ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/»*** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կատարել համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

N	Ապրանքի անվանումը	Արժեք[1]	ԱԱՀ[2]	Առաջարկված գինը[3] /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1.	Թուղթ օֆսեթային N1			
2.	Ծրար նամակի չթափանցող			
3.	A4 ֆորմատի համար մեծ Ծրար			
4.	CD դատարկ սկավառակ			
5.	DVD ԴՎԴ-ՌՎ դատարկ սկավառակ, առանց տուփի			
6.	Գրիչ՝ գնդիկավոր			
7.	Գելային Գրիչ			
8.	Թուղթ նշումների համար կպչուն			
9.	Նշումների թուղթ տրցակներով նշումների համար			
10.	Գրասենյակային գիրք, մատյան (70 - 200) էջ			
11.	Կարիչ (ստեպլեր)՝ 1. 20-ից մինչև 30 թերթի համար			
12.	Գրասենյակային կարիչներ			
13.	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով			

[1] *3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
[2] *Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*
[3] *Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:*

14.	Չոր սոսինձ թղթի			
15.	Գծանշիչ (մարկեր) սովորական			
16.	Մատիտ գրաֆիտե միջուկով սովորական			
17.	Գրասենյակային ***տարբեր չափսերի (փոքր և միջին)*** կարիչների մետաղալարե կապեր բլոկներով			
18.	Թանաք կնիքի			
19.	Սեղմակ (կլիպս) տարբեր չափսերի մետաղական			
20	Ռետինե ջնջոց փոքր հասարակ			
21.	Սրիչ			
22.	Գրասենյակային գրչատուփ, արկղիկներ, էջաբաժանիչ թղթե կպչուն տարբեր գույների			

**Հրավերով ներկայացված Հավելված 1-ով ներկայացված աղյուսակը լրացնելը պարտադիր է:*

ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի համաձայն՝* ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 20___թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/2»

ք. Երևան « » « » 2014թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Քրմոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և « » -ն, ի դեմս տնօրեն -ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (Հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 3):

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե 3 և ավել անգամ խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ( ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը սահմանված ստանդարտի պահանջներին:

5.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Մատակարարը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու).օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8 Պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք.Երևան, Կառավարական տուն 3 ՀՎՀՀ 02507171 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011105120, Հ/Հ 900011105013	« » ՍՊԸ ք.Երևան Հեռ. Հ/Հ ՀՎՀՀ
---------- /ստորագրություն/ Կ.Տ	---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« » « » 2014թ. կնքված
N ծածկագրով պայմանագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	**Ապրանքների անվանում**	**Տեխնիկական բնութագիր**	**Պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ**
1	***2***	***3***	***4***
	Գնման առարկան		
N	*Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերում՝ այդ թվում*		*Յուրաքանչյուր ապրանքի գինը՝ առանց ԱԱՀ*
1.	Թուղթ օֆսեթային N1	Թուղթ օֆսեթային N1, բարձր որակի A4 (210x297) մմ ձևաչափի, 1 մ2 թղթի զանգվածը՝ 80 գ, մեքենայական հարթությամբ, չկավճած, սպիտակությունը 80 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, , ԳՕՍ 9094-89 կամ համարժեք, 40 արկղ/յուր. արկղում 5 տուփ/յուր.տուփում 500 հատ	
2.	Ծրար նամակի չթափանցող	Ծրար նամակի չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սահմանված չափի և ձևի 40 հատ	
3.	A4 ֆորմատի համար մեծ Ծրար	A4 ֆորմատի համար մեծ Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից ըստ ԳՕՍ 9094-89, ինքնասոսնձվող **20 հատ**	
4.	CD դատարկ սկավառակ	CD դատարկ սկավառակ, **առանց տուփի 100 հատ**	
5.	DVD ԴՎԴ-ՌՎ դատարկ սկավառակ, առանց տուփի	դատարկ սկավառակ, առանց տուփի DVD ԴՎԴ-ՌՎ, 4,7 Գբ (DVD-RW, 4,7 Gb) **30 հատ**	

6.	Գրիչ՝ գնդիկավոր	Գնդիկավոր տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի **50 հատ**	
7.	Գելային Գրիչ	0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել) **30 հատ**	
8.	Թուղթ նշումների համար կպչուն	Թուղթ նշումների համար կպչուն, Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 18510-87 կամ համարժեք, փաթեթավորումը՝ ցանկացած **տեսքով 20 տուփ**, յուրաքանչյուրում **100 թերթ**	
9.	Նշումների թուղթ տրցակներով նշումների համար	Նշումների թուղթ տրցակներով նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի, 20 տուփ, յուրաքանչյուրում 100 թերթ	
10.	Գրասենյակային գիրք, մատյան (70 - 200) էջ	Գրասենյակային գիրք, մատյան (70 - 200) էջ, տողանի, սպիտակ էջերով Համապատասխան ձևաչափերի և տարբեր չափերի: 10 հատ յուրաքանչյուրը 70 թերթ	
11.	Կարիչ (ստեպլեր)՝ 1. 20-ից մինչև 30 թերթի համար	Կարիչ (ստեպլեր)՝1. 20-ից մինչև 30 թերթի համար: Գրասենյակային մետաղալարե կապերով ամրացնելու համար 10 հատ	
12.	Գրասենյակային կարիչներ	❖ Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար **10 հատ** ❖ -Գրասենյակային կարիչ 50-ից ավելի թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար **3 հատ**	
13.	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով	N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար **10 հատ**	
14.	Չոր սոսինձ թղթի	թղթի ստվարաթղթի և տեքստիլի, գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար **20 հատ**	
15.	Գծանշիչ (մարկեր) սովորական	Գծանշիչ (մարկեր) սովորական տարբեր գույների, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով **20 հատ**	
16.	Մատիտ գրաֆիտե միջուկով սովորական	Մատիտ գրաֆիտե միջուկով սովորական Հասարակ սև կամ գունավոր, համապատասխան կարծրությամբ **30 հատ**	
17.	Գրասենյակային ***տարբեր չափսերի (փոքր և միջին)*** կարիչների մետաղալարե կապեր բլոկներով	❖ ***փոքր*** կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ 20 տուփ յուրաքանչյուրում 1000 հատ	

		❖ ***միջին*** կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ, 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ **20 տուփ** յուրաքանչյուրում **1000 հատ**	
18.	Թանաք կնիքի	Թանաք կնիքի (շտամպի) բարձիկի համար **3 հատ**	
19.	Սեղմակ (կլիպս) տարբեր չափսերի մետաղական	Լայնությունը 19 մմ 50 հատ, միջին Մետաղական, լայնությունը 25 մմ՝ **50 հատ**, մեծ Մետաղական, լայնությունը 32 մմ՝ **50 հատ**	
20.	Ռետինե ջնջոց փոքր հասարակ	նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար **20 հատ**	
21.	Սրիչ	Սրիչ գրաֆիտե մատիտի համար սովորական **15 հատ**	
22.	Գրասենյակային գրչատուփ, արկղիկներ, էջաբաժանիչ թղթե կպչուն տարբեր գույների	գրասենյակային գրչատուփ, արկղիկներ15 հատ, էջաբաժանիչ թղթե կպչուն 30 հատ/5 գույն	

Ապրանքների մատակարարման սկիզբ	Պայմանագրի կնքման պահից 30 աշխատանքային օր հետո
Ապրանքների մատակարարման ավարտ	20.12.2014թ.
Ապրանքների մատակարարման վայրը	**Պատվիրատուի պահեստ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՀՀ առողջապահության նախարարություն ք. Երևան, կառավարության 3 շենք ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900013104063 ՀՎՀՀ 02507171 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	ԿԱՏԱՐՈՂ « » ՍՊԸ Հասցե՝ Բանկ Հ/Հ ՀՎՀՀ ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
«____» _____ 201__թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/» ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Գնման ենթակա ապրանքների				Գնման ենթակա քանակները ըստ եռամսյակների		ԸՆԴԱՄԵՆԸ		
	Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը	Չափման միավորը	Միավորի գինը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ	Միավորի գինը /ՀՀ դրամ/ ներառյալ ԱԱՀ	Երկրորդ եռամսյակ	Երրորդ եռամսյակ	Քանակ	Գումար /առանց ԱԱՀ/	Գումար /ներառյալ ԱԱՀ/
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
1	Գրենական պիտույքներ	դրամ			1		1		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը					**1**		**1**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՀՀ առողջապահության նախարարություն ք. Երևան, կառավարության 3 շենք ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900013104063 ՀՎՀՀ 02507171 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	**ԿԱՏԱՐՈՂ** **« »ՍՊԸ** **Հասցե՝** **Բանկ** **Հ/Հ** **ՀՎՀՀ** ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
«____» _____ 201__թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ	ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ 2014թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ, ԸՆԴ ՈՐՈՒՄ՝										ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ (առանց ԱԱՀ)
	Անվանումը	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*
Ծրագիր՝ ՀՀ-ում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում						**Բաժին 07 Խումբ 06 Դաս 02 Ծրագիր 06**						**Հ/Հ 900013104063**	
1	Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ				100%	100%	100%	100%	100%	100%	100%	**100%**
ԸՆԴԱՄԵՆԸ					100%	100%	100%	100%	100%	100%	100%	**100%**

* Գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՀՀ առողջապահության նախարարություն ք. Երևան, կառավարության 3 շենք ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900013104063 ՀՎՀՀ 02507171 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	**ԿԱՏԱՐՈՂ** **« » ՍՊԸ** **Հասցե՝** **Բանկ** **Հ/Հ** **ՀՎՀՀ** ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 4
___ _____ 2014թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/3-2014/» պայմանագրի

Պ ա տ վ ի ր ա տ ու **Կ ա տ ա ր ո ղ**

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013104063
ՀՎՀՀ 02507171

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

___ _____ 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ **_____ պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ **____ _____ 2014թ.**
Պայմանագրի համարը՝ N _____
Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Քրմոյանի, և Կատարողը՝ _____, ի դեմս _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ **___ _____ 2014թ.** պատասխանատու ստորաբաժանման **N__** եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատուցված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը **___ _____ 201_թ.** -ից **___ _____ 201_թ. – ը** ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ Ծառայությունը.

Ծառայության անվանումը և համառոտ նկարագիրը	Ծառայության քանակական ցուցանիշը	Ծառայության մատուցման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Ծառայությունն ընդունեց

_____
(ստորագրություն)

ազգանուն_____
Կ.Տ.

Ծառայությունը հանձնեց

_____
(ստորագրություն)

ազգանուն_____
Կ.Տ.